Հավելված
ԱրՊՀ գիտական խորհրդի
2015 թվականի հունիսի 23 -ի N14 -Լ որոշման

«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրման և օգտագործման կանոններ

1. Ընդհանուր դրույթներ

«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԱրՊՀ) ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեն տրամադրվում է ԱրՊՀ ուսանողների էլեկտրոնային փոստի դոմեյնի (asumail.am) տիրույթում (ֆորմատը՝ anun.azganunxx@asumail.am): Հասցեն տրամադրվում է նրա ուսումնառության ընթացքում և պահպանվում է ԱրՊՀ-ում ուսումնառությունն ավարտելուց հետո: Էլեկտրոնային հասցեն ստանալիս ուսանողը ստորագրում է համապատասխան մատյանում:

2. Ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեի օգտագործումը

ԱրՊՀ ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեն ուսանողի և համալսարանի միջև հաղորդակցության պաշտոնական միջոց է: Դեկանատի և այլ վարչական ստորաբաժանումների կողմից ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրությունների առաքումը ուսանողին պաշտոնական ծանուցման եղանակ է: Ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեատիրոջ անվանումը և գաղտնաբառը կարող են օգտագործվել նաև համալսարանի տեղեկատվական այլ համակարգեր մուտք գործելու նպատակով՝ ձևավորելով մեկ միասնական ներհամալսարանական տեղեկատվական համակարգ:

Ուսանողը պարտավոր է իրեն տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեն օգտագործել միայն կրթական նպատակներով :

3.Հասցեի տրամադրում և անվանում

Էլեկտրոնային փոստի հասցեն տրամադրվում է ԱրՊՀ ցանցային ադմինիստրատորի կողմից ֆակուլտետների դեկանատների միջոցով ուսումնական պարապմունքների առաջին 10-օրյակում: Էլեկտրոնային փոստի հասցեն (օգտագործողի անվանումը, որը նախորդում է <<@asumail.am>> հատվածին) գեներացվում է ուսանողի անվան և ազգանվան միջոցով, իսկ համընկնման դեպքում տրվում է հերթական համարը:

4. Գաղտնաբառ

Ժամանակավոր գաղտնաբառը գեներացվում է ԱրՊՀ ցանցային ադմինիստրատորի կողմից, որը ուսանողը պարտավոր է փոփոխել էլեկտրոնային հասցեն ստանալու առաջին շաբաթվա ընթացքում: Խորհուրդ է տրվում առնվազն 7 նիշից բաղկացած գաղտնաբառ ընտրել , որը կպարունակի ինչպես լատիներեն տառեր, այնպես էլ թվեր: Պետք չէ ընտրել օգտագործողի անվան հետ համընկնող կամ պարզ (հեշտ գուշակվող) համադրումներից բաղկացած գաղտնաբառեր: Ուսանողը էլեկտրոնային փոստի գաղտնաբառն իրավունք չունի փոխանցելու այլ անձանց: Համակարգի հետ տեխնիկական խնդիրներ ունենալու դեպքում ուսանողը պետք է դիմի ֆակուլտետի դեկանատ:

5. Աշխատանքի համակարգում

Էլեկտրոնային փոստի կայք մուտք գործելու համար պետք է այցելել էլեկտրոնային փոստի մուտքի էջ, որի համապատասխան հղումն առկա է նաև ԱրՊՀ պաշտոնական կայքէջում: Էլեկտրոնային փոստի մուտքի էջի հասցեն է՝ mail.asu.am: էլեկտրոնային փոստի մուտքի էջից ուսանողի էլեկտրոնային փոստի անհատական էջ մուտք գործելու համար ուսանողը պետք է ընտրի asumail.am դոմեյնը, այնուհետև մուտքագրի օգտագործողի անվանումն ու գաղտնաբառը և կատարի փոստարկղ մուտք գործելու հրահանգը:

6. Փոստարկղի ծավալներ

Ներկայումս էլեկտրոնային փոստի հասցեի փոստարկղի ընդհանուր ծավալը (այդ թվում՝ ուղարկված նամակներ, պահպանված նամակներ և այլն) սահմանված է 200 Mb: Մեկ ուղարկվող նամակը կարող է ունենալ կցված ֆայլեր, որոնց ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 25 Mb ծավալը: Ստացվող մեկ նամակի ծավալը չպետք է գերազանցի 50 Mb ծավալը: Փոստարկղի սահմանափակումներին չհասնելու և տեղեկատվության հնարավոր կորստի հետևանքները մեղմացնելու նպատակով խորհուրդ է տրվում պարբերաբար ստացված և ուղարկված հին նամակները պահել անձնական համակարգչում՝ մշտապես ազատ պահելով էլեկտրոնային փոստի փոստարկղերը:

7. Տարբեր ծրագրային գործիքների միջոցով էլեկտրոնային փոստի հասցեի օգտագործում

ԱրՊՀ էլեկտրոնային փոստի սերվերն ապահովում է էլեկտրոնային փոստի հեռավար մուտքի և օգտագործման POP3 ստանդարտը (Post Office Protocol Version 3): Այն հնարավորություն է ընձեռում մի շարք ծրագրային գործիքների միջոցով, օրինակ՝ Outlook express ծրագրով, արագ ստուգել էլեկտրոնային փոստը, ուղարկել նամակներ, ստացված նամակները ներբեռնել անհատական համակարգիչ:

Սույն կանոնները կոպտորեն խախտող ուսանողներին կամ շրջանավարտներին, ինչպես նաև ԱրՊՀ-ից հեռացված ուսանողներին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեն կարող է կասեցվել: